Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (17 դասաժամ), հասարակագիտության (6 դասաժամ), ինֆորմատիկայի (11 դասաժամ) ,տեխնոլոգիայի տղաների խումբ (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի : Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

- Դիմում(ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրությոն (ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ նաև զինվորական գրքույկ հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ապրիլի 13-ը ներառյալ, ամեն օր ժամը 10^{00}-ից 15^{00}-ը , բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա ապրիլի 16-ին ժամը14^{00}-ին, Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Լոռու մարզ, ք. Ախթալա Թումանյան 44:

Տեղեկությունների համար զանգահարել (077)595458 հառախոսահամարով: